# Կուտակային ժամկետային ավանդի դադարեցումը

Եթե կուտակային ժամկետային ավանդի պայմանագիրը դադարեցվում է պայմանագրի գործողության առաջին 12 ամիսների ընթացքում, վճարման ենթակա տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի դիմաց հաշվարկված/վճարված տոկոսագումարի մեկ հարյուրերորդականի չափով:

Եթե կուտակային ավանդի պայմանագրի գործողությունը դադարեցվում է պայմանագրի գործողության առաջին 12 ամիսը լրանալուց հետո, վճարվող տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի փաստացի ժամկետին համամասնորեն՝ ստորև ներկայացված բանաձևով.

$$\text{ՎՏ} = \text{ՀՏ} \times \frac{\text{ՓԺ}}{\text{ՍԺ}}$$

որտեղ,

**ՎՏ** – վճարման ենթակա տոկոսագումար

**ՀՏ** – հաշվարկված տոկոսագումար

**ՓԺ** – փաստացի ժամկետ

**ՍԺ** – սկզբնական ժամկետ

Եթե տոկոսագումարն արդեն վճարվել է, վճարման ենթակա տոկոսագումարի և մինչև ավանդի պայմանագրի դադարեցման պահը ավանդի դիմաց վճարված տոկոսագումարների տարբերությունը ավանդի մարման պահին նվազեցվում է ավանդի գումարից:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00